ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

2018 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2019

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……..……..……3

ԲԱԺԻՆ 1.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրերի կառուցվածքը և կատարման ցուցանիշները……..……..…4

1.1 Ներդրումային ծրագրերի կառուցվածքը……..……..……..…4

1.2 Ներդրումային ծրագրերի կատարման ցուցանիշները……6

ԲԱԺԻՆ 2.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……..……8

ԲԱԺԻՆ 3.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը…….…… ….10

Եզրակացություն……..11

Հղումներ օգտագործված նյութերին……..……12

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2019 թվականի աշխատանքային ծրագրի 22-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) բնականոն գործունեության ապահովմանը և համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի գազատուրբինի վերակառուցմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ Ներդրումային ծրագրեր) [Որոշում 2, Որոշում 3] մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրերով համաձայնեցված և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ներդրումային ծրագրերը և Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրերի կառուցվածքը և կատարման ցուցանիշները

1.1 Ներդրումային ծրագրերի կառուցվածքը

Ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսված էր ձեռք բերել հիմնական գործունեության համար անհրաժեշտ սարքավորումներ, Ընկերության աշխատակիցների տեղափոխման համար ավտոբուս և մեքենաներ, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով՝ ժամանակակից պայմաններին համապատասխանող համակարգիչներ, աքսեսուարներ և գրասենյակային գույք, վարչական շենքի և համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի (այսուհետ՝ ՀՇԳՑԷ) աշխատակիցների հաշվառման միասնական համակարգի ներդրման ծառայություն, հիմնական միջոցների գույքագրման համար անհրաժեշտ շտրիխ-կոդավորման ծառայություն, ինչպես նաև իրականացնել խմելու ջրի ստորգետնյա մետաղական խողովակաշարի, գազատուրբինի և շոգետուրբինի վերակառուցման աշխատանքներ: Նշված ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 254,33[1] մլն դրամ:

Նկար 1-ում ներկայացված է Ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը, բացառությամբ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գների:

Նկար 1



Ինչպես երևում է Նկար 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 33,3%-ը, նախատեսված էր սարքավորումների, մասնավորապես ՀՇԳՑԷ շոգեկաթսայի մարդատար-բեռնատար 2 տոննա բեռնունակությամբ և ՀՇԳՑԷ շենքի մարդատար 320 կգ բեռնունակությամբ մեկական վերելակների ձեռքբերման նպատակով: 32% -ը նախատեսված էր խմելու ջրի համակարգի վերակառուցման, իսկ 23%-ը ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով:

Ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի գազատուրբինի վերակառուցման նպատակով նախատեսված էր իրականացնել 20,75 մլն եվրո ներդրումներ, որից՝

1. էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկներով նախատեսված նորոգման ծախսերում կուտակված միջոցներ՝ 11,37 մլն եվրո,
2. վերադարձվող պահեստամասերի արժեքից նվազեցումներ՝ 33,40 մլն եվրո,
3. ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր՝ 6,04 մլն եվրո:

1.2 Ներդրումային ծրագրերի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ 2018 թվականի ընթացքում իրականացվել են 11 855,949 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջությամբ հանձնվել են շահագործման:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է Ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրի շրջանակում հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների նպատակային ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		2018 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սարքավորումների ձեռքբերում և տեղակայում	84,6	33,3%	0,00	0,0%	0,0%
2	Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում	59,1	23,2%	55,3	81,4%	93,6%
3	Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում	13,6	5,3%	12,4	18,3%	91,5%
4	Խմելու ջրի համակարգի վերակառուցում	81,2	31,9%	0,0	0,0%	0,0%
5	Հիմնական միջոցների շտրիխ-կոդավորում	10,8	4,3%	0,0	0,0%	0,0%
6	Աշխատակիցների հաշվառման համակարգի ստեղծում	3,8	1,5%	0,0	0,0%	0,0%
7	Գրասենյակային գույքի ձեռքբերում	1,3	0,5%	0,2	0,3%	18,3%
ԸՆԴԱՄԵՆԸ		**254,3**	**100%**	**67,9**	**100%**	**27%**

Ներդրումային ծրագիրն իրականացվել է մասնակի և Ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը կազմել է 27%:

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված է Ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի գազատուրբինի վերակառուցմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրի շրջանակում հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների նպատակային ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	2018 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը
		հազար դրամ	
1	MXL2 ռեժիմի համար GT13E2 MXL գազատուրբինի վերակառուցման պայմանագրային գին (ապրանքներ)	10,507,402.5	10,528,913
2	MXL2 ռեժիմի համար GT13E2 MXL գազատուրբինի վերակառուցման համար աշխատուժի արժեք	710,829.0	783,241.0
3	Սպառվող նյութերի և գործիքների արժեքը	334,974.7	365,408.0
4	MXL2 ռեժիմի համար GT13E2 MXL գազատուրբինի վերակառուցման սարքավորումների արժեքին կապիտալացվող մաքսատուրք		43,082.5
5	Գազատուրբինի և շոգետուրբինի վերակառուցման ընթացքում առաջացող ոչ ռեզիդենտի շահութահարկ	41,273.2	67,390.8
Ընդամենը		11,594,479.4	11,788,035.5

N	Ներդրումների նպատակային ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		2018 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր	3,407.47	100%	3,601.03	100%	106%

ԲԱԺԻՆ 2.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 59,1 մլն դրամ՝ Ընկերության աշխատակիցների սպասարկման համար մեկ՝ 31 նստատեղով ավտոբուսի և ղեկավար անձնակազմի սպասարկման համար երեք ծառայողական ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման են հանձնվել 55,3 մլն դրամի տրանսպորտային միջոցներ՝ մեկ Հունդայի Քանթրի ավտոբուս, 2 Տոյոտա Կորոլա և մեկ Շկոդա Օկտավիա մակնիշների ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու նպատակով:

Համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված ներդրումներ

Այս ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 13,5 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 12,4 մլն դրամի համակարգչային տեխնիկա:

Վերելակների ձեռքբերմանը և տեղադրմանն ուղղված ներդրումներ

Այս ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 84,6 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում նշված ներդրումները չեն իրականացվել:

Խմելու ջրի խողովակաշարի վերակառուցմանն ուղղված ներդրումներ

Այս ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 81,2 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում նշված ներդրումները չեն իրականացվել:

Հիմնական միջոցների շտրիխ-կոդավորումանն ուղղված ներդրումներ

Այս ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 10,8 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում նշված ներդրումները չեն իրականացվել:

Աշխատակիցների հաշվառման համակարգի ստեղծմանն ուղղված ներդրումներ

Այս ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 3,8 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում նշված ներդրումները չեն իրականացվել:

MXL2 ռեժիմի համար GT13E2 MXL գազատուրբինի վերակառուցմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված իրականացնել 3 407,5 մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 3 601,0 մլն դրամի ներդրումներ:

ԲԱԺԻՆ 3.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում: Արդյունքում, Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 193,5 մլն դրամով:

Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցներիի օտարման (վաճառքի) արժեքը՝ 1,2 մլն դրամ, նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 3-ում ներկայացված է Ընկերության կողմից 2018 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 3

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների վերաբերյալ

մլն. դրամ

1	**2018 թվականի ներդրումային ծրագրերով հաստատված ներդրումների ընդհանուր ծավալը**	**3 661.8**
2	**2018 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը**	**3 668.9**
3	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**194.7**
3.1	Օտարված (վաճառված) հիմնական միջոցներ	1.2
3.2	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	193.5
4	**2018 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**3 474.2**

Եզրակացություն

Ամփոփելով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գործունեության արդյունքները նշենք, որ 2018 թվականի Ընկերության բնականոն գործունեության ապահովման ուղղված ներդրումային ծրագիրը իրականացվել է 27%-ով, իսկ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի գազատուրբինի վերակառուցմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագիրն՝ ամբողջությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ներդրումային ծրագրի շրջանակում իրականացվել և շահագործման են հանձնվել 3 668,9 մլն դրամի կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր, որից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 3 474,2 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի №447Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 18-ի №122Ա որոշումը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2018 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»:

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 18-ի №123Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի №586Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

Հաշվետվություն - «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2019 թվականի մայիսի 10-ի №326-19 գրությամբ ներկայացված հաշվետվություն